

Լիբանանի Անկախութեան տօնին առիթով, համաձայն Մամլոյ սենտիքայի որոշումին: «Ազդակ» լոյս պիտի չտեսնէ Շաբաթ, 22 Նոյեմբերին: Մեր յաջորդ թիւը՝ Երկուշաբթի, 24 Նոյեմբերին:

# ԱԶԳԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE جريدة يومية سياسية وأدبية - النيرة السؤولة، إيشادرويشيان

1500 Լ.Ո. 76ԳԻ ՏԱՐԻ, ԹԻՒ 216 (21558) ՈՒՐԱԿՄ, 21 ՆՈՅՏԵՐԵՐ 2003 10 ԷՁ

ՆԱԽԱԳԱՅ ԶՈՂԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԻՄՆԱԳԵՏ ՄԸ

Հայաստանի նախագահ Ռուպերթ Քոչարեան երկ րնդունեց Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի եւրոպական հարցերու օգնականի տեղակալ Լին Փասքոն: Հանդիմանն ընթացքին ընտրուած են հայ - ամերիկեան երկկողմանի յարաբերութիւններուն եւ շրջանային ինդիքներուն առնչուող հարցեր: Կողմերը անդրադարձած են նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ներկայ փուլին:

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ՀԱՄԱԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՄԲ

(Լիբանանի Անկախութեան Տօնին առիթով)

Աշխարհակարգային ձեւաւորումներու նորագոյն պարագայումներու բովի մէջ այժմեական իմաստ կ'ունենան երկիրներու եւ ժողովուրդներու անկախութեան տօները, որոնք ցուցադրական շքերթներու սահմաններէն անդին սպաշին-քաղաքական մտածողութեան նոր հորիզոններ կը բանան հասարակութեան առջեւ:

Մէկ կողմէ գերպետական մակարդակներու վրայ համաշխարհային քաղաքականութիւնը շրջանցումներ կը կատարէ ժողովուրդներու սպառնալուծութեան եւ պետութիւններու անկախութեան, միւս կողմէ հակապոլեոնական կարգով ծնունդ կ'առնեն միաբնակայն օրինակափութեան դէմ վայրագ տարակերպական շարժումներ:

Ծայրայեղութիւններով յատկանշուող քաղաքական համաշխարհային ա'յս մթնոլորտին մէջ է փաստօրէն, որ պետութիւններ կը փորձեն պահպանել իրենց սահմանափակ անկախութիւնը՝ երբեմն տեղի տալով գերպետական տնտեսական թէ քաղաքական ճնշումներուն, երբեմն ալ սուղ վճարելով իրենց անկախ կեցւածքներուն:

Տնտեսաքաղաքական իրերու այս դրութեան մէջ է, որ Լիբանանեան անկախութեան հերթական տօնակատարութեան նախօրեակին պետութեան անկախութեան պահպանման ճիգերը լուսարձակի տակ կու գան շրջանային թէ միջազգային քաղաքական իրադրութեանց ընդհանուր հոլովոյթին մէջ:

Անկախութեան կերտումին բնական կարգով յաջորդած անկախութեան պահպանման դժուարին գործընթացը բազմաձևակաւ մարտահրաւերներու գումար մըն է, որ կը սկսի քաղաքացիական կրթութեամբ, կ'անցնի պիտոտրական ուժ դառնալու հրամայականէն, կը հասնի տնտեսութի վերածուելու պայմանային հանգրուան եւ կը թուի հանգի անվտանգութիւն կոչուող բարդ այլ անխափանելի անհրաժեշտութեան:

Անկախութեան հայեցակարգի պայմանական ու անփոփոխելի այս նախադրելներուն առընթեր բոլոր հիմնահիւնդրներուն պարագային պետական մակարդակի վրայ ռազմավարութիւններու մշակումն ու անոնց կիրարկումը աւելի քան էական են անկախութիւններու ամրակայման համար: Որովհետեւ, անկախութիւնը ամէն բանէ առաջ մտածողութիւն է, պետական մակարդակի վրայ համակարգուած եւ հասարակական անկախութեան պարզապէս յատուկ մշակոյթ, որուն գիտակցումը քաղաքացիական կրթութեամբ կը սկսի եւ կը խարսխուի հայրենիք հասկացողութեան անփոխարինելիութեան սկզբունքին վրայ: Քաղաքացիական առաջադրութեամբ հասարակարգի յառաջացումն է միայն, որ կը յաջողի արժէքային համակարգի համապատասխան պետական կառոյցներ ստեղծել եւ անոր անարգել գործունէութեան համար ռազմավարութիւն մշակել ու կիրարկել թէ՛ պետական եւ թէ՛ հասարակական մակարդակներու վրայ:

Անկախ պարելու եւ անկախ գոյատեւելու գիտակցական այս մօտեցումն է, որ լիբանանեան մեր հայրենիքին համար կը թելադրէ այսօր ներքաղաքական միասնականութեամբ դիմագրաւել արտաքին թշնամիին ոտնձգութիւններով յատկանշուող յարձակող պայաջտութիւնը: Կրննորձէ Լիբանանը յատկանշող միջնամայնաքային համակեցութեան անխափանելի հարթակին վրայ կառուցել խաղաղ գոյակցութիւն եւ ներհասարակական հակադրութիւններու չէզոքացումով կանխարգիլել թշնամի ուժերու յարձակումը: Զեշտ է՝ հարաւի դիմադրութեան համազգայնացումն ու մարտնակ բանակի կայացումով անսասան կը պահէ Լիբանանի հողային ամբողջականութիւնը: Տակաւին կ'առաջադրէ կայուն տնտեսութեան յառաջացումը եւ այդ ճամբով քաղաքացիներուն արժանապատիւ կենցաղ ապահովելը:

Անհատական անկախ պարելու ճանին պետական անկախ գործելու ճանն արժանապատուութեան առնչուող անսակարկելի սկզբունք է, որ նաեւ ժողովուրդներու եւ երկիրներու յառաջդիմութեան ելակէտ է: Լիբանանեան քաղաքական դաշտը բաղկացնող բոլոր ուժերը միջնամայնաքային արդար համագործակցութեան սկզբունքին հիման վրայ եւ համալիբանանեան այս մտածողութեամբ կը յաջողի դիմագրաւել Լիբանանին եւ լիբանանցի ժողովուրդին առջեւ ծառայող այսօրուան քաղաքական, պիտոտրական, ընկերային եւ տնտեսական մարտահրաւերները:

## ՊՈԼԻՍ ԱՆԳԱՍ ՄԸ ԵՒՍ ԹԱՏԵՐԱԲԵՍ ԴԱՐՁԱԲ ԱՇԱԲԵԿՉԱԿԱՆ ԱՐԱՐՔՆԵՐՈՒ, ՈՐՈՆՔ ՊԱՏՃԱՌԵՑԻ ԱՌՆՈՒԱԶՆ 27 ԶՈՐ ԵՒ ԱԵԼԻ ՔԱՆ 450 ՎԻՐԱԲՈՐ

Նուազ քան մէկ շաբթուան ընթացքին, Պոլիս երէկ դարձեալ թատերաբեմ դարձաւ ահաբեկչական յարձակումներու, որոնք առնուազն 27 զոհ եւ աւելի քան 450 վիրաւոր խլած են:

Անձնասպանական երկու գործողութիւններու թիրախը բրիտանական կեդրոններ էին: Պայթուումներէն մէկը քանդած է Պէյ-յօլլուի շրջանը գտնուող բրիտանական հիւպատոսարանին մէկ մասը, մինչ միւս պայթուումը հարուածած է առեւտրական Լեվէթ թաղամասին մէջ գտնուող բրիտանական «Էյչ. Էս. Պի.» դրամատունը:

Ըստ «Անտոլու» լրատու գործակալութեան, անձանց մը հեռաձայնային հաղորդակցութեամբ մըրած է, թէ յարձակումները կատարուած են «Քալիտա»-ի եւ Մեծն Արեւելքի Ներխուժողներու իսլամական ձեռնարկի կողմէ միասնաբար:

Երկու խմբակները նախապէս ստանձնած էին անցեալ Շաբաթ օրուան Պոլսոյ երկու սինակոկներու դէմ տեղի ունեցած անձնասպանական գործողութիւնները:



Պոլսի քաղաքում տեսարանը շաբաթ օրը: Գործողութիւնները, որոնք 25 զոհ եւ աւելի քան 300 վիրաւոր խլած էին:

«Մասնական թիրախներու դէմ մեր յարձակումները պիտի շարունակուին: Իսլամները առանձին չեն», ըսած է անձանց թիրախները:

Արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլի յայտնեց, որ թուրքի շարունակէ ահաբեկչական յարձակումները դէմ պայքարելու:

Թուրք ոստիկաններու համաձայն, երէկուան յարձակումին գործածուած ուժերը սինակոկներուն դէմ օգտագործուած էին:

Ըստ «Անտոլու» լրատու գործակալութեան, անձանց մը հեռաձայնային հաղորդակցութեամբ մըրած է, թէ յարձակումները կատարուած են «Քալիտա»-ի եւ Մեծն Արեւելքի Ներխուժողներու իսլամական ձեռնարկի կողմէ միասնաբար:

Ըստ «Անտոլու» լրատու գործակալութեան, անձանց մը հեռաձայնային հաղորդակցութեամբ մըրած է, թէ յարձակումները կատարուած են «Քալիտա»-ի եւ Մեծն Արեւելքի Ներխուժողներու իսլամական ձեռնարկի կողմէ միասնաբար:

Ըստ «Անտոլու» լրատու գործակալութեան, անձանց մը հեռաձայնային հաղորդակցութեամբ մըրած է, թէ յարձակումները կատարուած են «Քալիտա»-ի եւ Մեծն Արեւելքի Ներխուժողներու իսլամական ձեռնարկի կողմէ միասնաբար:

## ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆԹԱՑԻԿ ՆԻՍՏ

Կառավարութիւնը երէկ Թանգարանի շրջանի իր կեդրոնատեղիին մէջ գումարեց իր հերթական ընթացիկ նիստը՝ նախագահութեամբ հանրապետութեան նախագահ զօր. Էմիլ Լահուտի եւ ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի:

Ժողովին բացակայեցան նախարարներ Ժան Օպէյտ, Սէյման Յրենժիէ եւ Շարէս Պուէյյո:

Նիստին ընթացքին քննարկուեցան վառելանիւթի ներածման թղթածրարը, ինչպէս նաեւ կենսալորտի նախարարութեան առնչուող քարահանքերու թղթածրարը:

Նիստին ետք տեղեկատուութեան նախարար Միշէլ Սըմահա նկատել տուաւ, որ յառաջիկայ շաբաթներուն աւելի եւս պիտի յստականան լիբանանեան տնտեսական վեհաժողովին արդիւնքները, մասնաւոր կառավարական ներքին աշխատանքային եղանակին իմաստով:

Սըմահա յայտնեց նաեւ, որ քարահանքերու թղթածրարը վերստին պիտի քննարկուի ներքին գործոց եւ կենսալորտի նախարարութիւններուն կողմէ:

Իսկ ինչ կ'առնչուի վառելանիւթի ներածման, ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Այուպ Հըմայէտ պէտք է կառավարութեան յաջորդ նիստին իսկ վերջնական անկախութեան մը ներկայացնէ: Նշենք, որ յաջորդ նիստը պիտի գումարուի Չորեքշաբթի, 3 Դեկտեմբեր 2003ին:

Վարչապետ Հարիրի նիստին ետք թղթակիցներուն հետ ունեցած զրոյցի մը ընթացքին յայտնեց, որ նախագահ Լահուտին ներողամտութիւն խնդրած է, որ Լիբանանի Անկախութեան տօնին առիթով պաշտօնական ձեռնարկին պիտի չկարենան ներկայ գտնուիլ:

Սըմահա իր յայտարարութիւններուն մէջ արդէն տեղեկացուցած էր, թէ վարչապետ Հարիրի այսօր՝ Ուրբաթ, Ռամատանի վերջին օրուան առիթով պիտի մեկնի Մեքքէ:

## ԶՕՐ. ՍԼԷՅՄԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՆ ԱՆԿԱՒՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Բանակի ընդհանուր հրամանատար զօր. Միշէլ Սէյման Լիբանանի Անկախութեան 60ամեակի պաշտօնական տօնակատարութեանց նախօրեակին երէկ արտասանեց «Ապահովական Օր»-ի իր պատգամը, որուն մէջ կոչուող լիբանանեան բանակին՝ շարունակելու հայրենիքի պաշտպանութեան եւ բռնագրաւուած հողերու ազատարարման առաքելութիւնը, ամրապնդելով ռուսը եւ իսրայէլը, ինչպէս նաեւ զգալով մեծ պատասխանատուութիւնը:

Զօր. Սէյման շեշտեց սուրիական բանակին հետ գործակցութեան անհրաժեշտութիւնը, ընդգծելով, որ Սուրիայ գոհողութիւններ կատարած է պահպանելու համար Լիբանանի գերիշխանութիւնը, պայքարի ոգին եւ միասնականութիւնը:

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՅՍՕՐ ԿԸ ՀԱՍՆԻ ԵՐԵՒԱՆ

Լեռնային Ղարաբաղի Ազգային Ժողովի մէկ պատուիրակութիւնը, գլխավորութեամբ Ազգային Ժողովի նախագահ Օլէկ Եսայեանի, պաշտօնական այցելութեամբ մը յայտնեց Երեւան: Պատուիրակութիւնը հանդիպումներ պիտի ունենայ Հայաստանի Ազգային Ժողովի նախագահին, փոխնախագահներուն, մշտական յանձնաժողովներուն նախագահներուն եւ խմբակցութիւններու ղեկավարներուն հետ: Պատուիրակութիւնը պիտի տեսակցի նաեւ Հայաստանի Ազգային Ժողովի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն համագործակցութեան միջխորհրդարանական յանձնաժողովի անդամներուն հետ: Հայաստանի Ազգային Ժողովի շէնքէն ներս տեղի պիտի ունենայ Լեռնային Ղարաբաղի Ազգային Ժողովի ներկայացուցչութեան գրասենեակի բացումը:

Օլէկ Եսայեանի գլխավորած պատուիրակութիւնը այսօր կ'ընդունի նաեւ Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանը: Լեռնային Ղարաբաղի Ազգային Ժողովի պատուիրակութիւնը վաղը պիտի այցելէ Հայաստանի նախագահ Ռուպերթ Քոչարեանին եւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին:

## ՎՐԱՍԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԶՄԻՆ ՄԷՁ՝ ՄԻԱՅՆ 3 ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՌՈՐՆԵՐ

Վրաստանի Կեդրոնական Ընտրական Ցանձնաժողովը երէկ հրապարակեց երկրին խորհրդարանի նորընտիր կազմը: Ինչպէս կը սպասուէր, խորհրդարանին մէջ վրացահայտութիւնը ներկայացուած է մեծամասնական կարգով ընտրուած երեք պատգամաւորներով՝ Հայկ Մելոնեան, Համլէթ Շահբեկեան, Հենգէլ Մկոյեան: Կուսակցական ցանկերով ոչ մէկ հայ պատգամաւոր ընտրուած է, մինչ խորհրդարանի անդամ չորս ազգայնացիներէն երեքը ընտրուած են կուսակցական ցանկերով:

Վրաստանի խորհրդարանի նախկին պատգամաւոր Վան Բանուրեզեան ափսոսանքով նշեց, որ թէ՛ կառավարական պլոքը եւ թէ՛ ընդդիմադիր կուսակցութիւնները երկրորդական դիրքեր տրամադրեցին հայրենի իրենց ցանկերուն վրայ: Բաղադատելով նախկին եւ ներկայ խորհրդարաններու կազմերը, Բանուրեզեան նշեց, որ նորընտիր խորհրդարանին մէջ ազգային փոքրամասնութիւններու ներկայացուցչներու թիւը նուազած է երեք անգամով:

Նշենք, որ խորհրդարանին մէջ ազգային փոքրամասնութիւնները ներկայացուած են վերջնաւ 7 պատգամաւորներով, որոնք կը կազմեն պատգամաւորներու ընդհանուր թիւին (235) մօտ 3 առ հարիւրը, մինչ ազգային փոքրամասնութիւնները կը կազմեն Վրաստանի ընկալութեան 30 առ հարիւրէն աւելին:

Վրաստանի Կեդրոնական Ընտրական Ցանձնաժողովը երէկ հրապարակեց երկրին խորհրդարանի նորընտիր կազմը: Ինչպէս կը սպասուէր, խորհրդարանին մէջ վրացահայտութիւնը ներկայացուած է մեծամասնական կարգով ընտրուած երեք պատգամաւորներով՝ Հայկ Մելոնեան, Համլէթ Շահբեկեան, Հենգէլ Մկոյեան: Կուսակցական ցանկերով ոչ մէկ հայ պատգամաւոր ընտրուած է, մինչ խորհրդարանի անդամ չորս ազգայնացիներէն երեքը ընտրուած են կուսակցական ցանկերով:

Վրաստանի խորհրդարանի նախկին պատգամաւոր Վան Բանուրեզեան ափսոսանքով նշեց, որ թէ՛ կառավարական պլոքը եւ թէ՛ ընդդիմադիր կուսակցութիւնները երկրորդական դիրքեր տրամադրեցին հայրենի իրենց ցանկերուն վրայ: Բաղադատելով նախկին եւ ներկայ խորհրդարաններու կազմերը, Բանուրեզեան նշեց, որ նորընտիր խորհրդարանին մէջ ազգային փոքրամասնութիւններու ներկայացուցչներու թիւը նուազած է երեք անգամով:

Նշենք, որ խորհրդարանին մէջ ազգային փոքրամասնութիւնները ներկայացուած են վերջնաւ 7 պատգամաւորներով, որոնք կը կազմեն պատգամաւորներու ընդհանուր թիւին (235) մօտ 3 առ հարիւրը, մինչ ազգային փոքրամասնութիւնները կը կազմեն Վրաստանի ընկալութեան 30 առ հարիւրէն աւելին:

## ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՄԷՁ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ԲԱՑՈՒՄԸ ՀՕՄԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ

Ախալքալաքի մէջ երէկ տեղի ունեցած ՀՕՄԻ բժշկական կեդրոնի բացման արարողութիւնը: ՀՕՄԻ Զաւախթի օժանդակման ծրագիրներու յանձնախումբի ջանքերով ստեղծուած այս կեդրոնը իր տեսակին մէջ միակն է Զաւախթի մէջ:

Անդրադառնալով կեդրոնին, Ախալքալաքի շրջանային հիւանդանոցի գլխավոր բժիշկ Ալեքսան Թորոսեան դիտել տուաւ, որ այսուհետեւ Զաւախթի կրնայ Զաւախթի մէջ ամբողջական բժշկական ստուգման ենթարկուիլ: Այս հանգամանքի նշանակութիւնը կը շեշտուի ձմրան, երբ ճանապարհները անանցանելի կ'ըլլան:

Ախալքալաքի Շրջանային Վարչութեան նախագահ տեղակալ Միխիլ Թորոսեան շնորհակալութիւն յայտնելով ՀՕՄԻ-ին՝ այս անսպասելի նուէրին համար, ըսաւ, թէ Հայրենասէր այսպիսի նախաձեռնութիւններ պէտք է օրինակ ծառայեն րոյսին:

# ՊՈԼԻՍ ԱՆԳԱՄ ՍԸ ԵՄ ԹԱՏԵՐԱԲԵՍ ԴԱՐՁԱԲ...

Շարունակուած Ա. ԷջԷԸ

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԵՊԻՃ ՊԸՐՐԻԻ

### ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՕՏԱՐ ԱՆՁՆԱԴՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ Այնէլ Թինէի մէջ ընդունեց «Թասք Տորս Տոր Լեպընան»ի մէկ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Թամըս Նասիֆի եւ ընկերակցութեամբ կապակերպութեան գործադիր վարչութեան նախագահ Ժատ Ֆարէսի:

Պատուիրակութեան ներկայացուցիչները նկատել տուին, որ Լիբանանի տնտեսական կացութիւնը լաւ վիճակի մէջ չի գտնուիր երկրին «դիպած» պարտքերուն պատճառով:

Պըրրի իր կարգին կոչ ուղղեց ամէն ջանք ի գործ դնելու՝ աշխուժացնելու համար արտերկրի արարներու եւ յատկապէս լիբանանցիներու դերակատարութիւնը, մասնաւորաբար Միացեալ Նահանգներու մէջ, որպէսզի կարենան ստեղծել ուժ մը, որ ապրու ըլլայ ամերիկեան կեցուածքին վրայ:

Պըրրի վերահաստատեց իր դատապարտումը ամերիկեան Քոնկրէսին կողմէ վաւերացուած՝ Սուրիան հաշուետուութեան կանչելու օրինագիծին դէմ եւ շեշտեց, որ նշեալ օրինագիծը կը հակադրուի միջազգային օրէնքին եւ ժողովրդավարութեան հասկացողութեան: Ան դիտել տուաւ, որ նշեալ օրինագիծը աշխարհի ժողովրդավարութեան կը վնասէ:

Պըրրի աւելցուց, որ Իսրայէլ առօրեայ դրութեամբ ոտնձգութիւններ եւ օդային սահմանի խախտումներ կ'արձակագրէ Լիբանանի մէջ եւ Լիբանանէն ջուր կը գողնայ:

Պըրրի շրջանային իրադարձութիւններուն անդրադառնալով ըսաւ, որ Լիբանան նախաձեռնած է խորհրդարանական պատուիրակութիւններ ուղարկել դէպի Եւրոպական Միութիւն, Ֆրանսա եւ Բրիտանիա, որպէսզի անոնց փոխանցէ Լիբանանի կեցուածքը շրջանին մէջ արձակագրուած վարկացումներուն շուրջ, անոնցմէ ամէնէն կարեւորը եւ վտանգաւորը նկատելով պաղեստինցի գաղթականները բնակեցնելու ծրագիրը:

գէտներ զգուշացուցած են, թէ կրնայ միայն ժամանակի հարց ըլլալ եւ թէ Բրիտանիա կրնայ թիրախ դառնալ ահաբեկչական գործողութիւններու:

Անոնց համաձայն, յառաջիկայ շաբաթներուն նմանօրինակ ռմբակարումները կրնան շատնալ:

Բրիտանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը համացանցի իր կայքին վրայ որոշ ժամանակէ ի վեր կը զգուշացնէր, թէ Թուրքիոյ մէջ «ահաբեկչութեան իսկական սպառնալիք կայ»:

Պոլսոյ պայթումներուն յոյսին տակ Եւրոպական սակարանային շուկաները երէկ առաւօտուն մեծ անկում արձանագրած են:

#### ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԸՍԿԱՅԱԿԱՆ ԱԼԻՔ

Աշխարհի դեկավարները երէկ փութացին դատապարտելու Պոլսոյ պայթումները, յայտնելով, թէ անոնք աւելի եւս պիտի ամրապնդեն կառավարութիւններու վճռակամութիւնը՝ ահաբեկչութեան դէմ պայքարին գծով:

Մ. Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ, որ Բրիտանիա կը գտնուէր պաշտօնական այցելութեամբ մը, յայտնած է, թէ ահաբեկիչները «պատուութիւնը կ'առնեն», աւելցրելով. «Միասնաբար»:



պիտի պայքարինը այսչարութեան դէմ, ո'ր ալ գտնուի անիկա»:

Ուաշինկթըն երէկ փակեց Պոլսոյ մէջ իր հիւպատոսարանը:

Վարչապետ Թոնի Պլէր շեշտած է, թէ պէտք է հակադրուի ահաբեկչութեան սպառնալիքին եւ պայքարելու մատնել:

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին զգուշացուցած է, թէ միջազգային ահաբեկչութեան սպառնալիքը տակաւին կանգուն է: Ան կոչ ուղղած է միջազգային յանձնախումբի համակարգումի՝ պայքարելու համար անոր դէմ:

Եւրոպական Միութիւնը յարձակումները դատապարտած է իբրեւ «բարբարոս», պօրակցութիւն յայտնե-

լով Թուրքիոյ եւ Լոնտոնի՝ ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ:

Եւրոպական Միութիւնը պահած է իբրեւ յարգանք պիտեւրուէ:

Միութեան ներկայ նախագահ Խոսեֆ Վարչապետը Միլվիօ Պերլուսոնի դատապարտած է «վայրագ» յարձակումները, որոնք նաեւ խստիւ դատապարտուած են Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի կողմէ:

Յունաստանի վարչապետ Բոսթաս Սիմիթիս դատապարտելով պայթումները, ըսած է, թէ անոնք հետեւանք են «կոյր քաղաքականութեան, որ հարցեր չի լուծեր, այլ՝ անել կացութիւններու կը յանգի»:

Սուրիա ուժգին դատապարտած է «ահաբեկչական» անձնասպանական գործողութիւնը, զօրակցութիւն յայտնելով Թուրքիոյ: Տեղեկատուութեան նախարար Ահմէտ Հասսան ըսած է, թէ իր երկիրը կը դատապարտէ «ամէն տեսակի ահա-

բեկչութիւն, որ անմեղներ թիրախ կ'ունենայ»:

Իրան դատապարտած է պայթումները եւ պատրաստակամութիւն յայտնած՝ որեւէ ձեւով օժանդակելու Թուրքիոյ: «ԻՐՆԱ» լրատու գործակալու-

թեան տեղեկութիւններուն համաձայն, իրանեան «Միլլաթ Պանթ»ի մէկ մասնաճիւղին մէջ աշխատող 10 իրանցիներ վիրաւորուած են պայթումներուն պատճառով:

Ապհարի իմամը՝ շէյխ Մոհամէտ Սալիտ Թանթաւի խստիւ դատապարտած է Թուրքիոյ մէջ տեղի ունեցած ռմբակարումները, ըսելով, թէ այդ արարքները արգիլուած են Աստուծոյ կողմէ:

Իսրայէլի արտաքին գործոց նախարարը՝ Սիլվան Շալոմ նոյնպէս դատապարտած է «ցնցիչ» յարձակումները:

«ԱՆԱՏՈՒՈՒ» լրատու գործակալութեան համաձայն, անցեալ շաբաթավերջի Պոլսոյ պայթումներուն կապակցութեամբ 6 հոգի ամբաստանուած է: Անոնք Պոլսոյ մէկ բանտին մէջ արգելափակուած են: (ԱՅՓ)

## ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ԲԱՑՈՒՄԸ...

Շարունակուած Ա. ԷջԷԸ

Ծալկայի շրջանէն Վրաստանի խորհրդարանի նորընտիր պատգամաւոր Հայկ Մելտոնեան գոհունակութեամբ խօսելով կեղրոնին մասին յոյս յայտնեց, որ ՀՕՄի ազգանուէր գործունէութիւնը Զաւախի մէջ շարունակուի:

ՀՕՄի Ախալքալաքի գրասենեակի տնօրէն Վայր Արարեան հաստատեց, որ ՀՕՄի առողջապահական գործունէութիւնը Զաւախի մէջ չի սահմանափակուիր միայն նորարաց այս կեղրոնով. մօտ 15 հիմնական գիւղերու մէջ պէտք է վերականգնել նախկին առողջապահական կեղրոնները, իսկ հիւանդանոցներու արհեստագիտական հզօրացումը մշտապէս մաս պիտի կազմէ ՀՕՄի ծրագիրներուն:

### «ԱՉԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

● Իրենց աներոջ եւ հօր՝ Պատիկ Ժալուէնի մահուան առիթով, Տէր եւ տիկին Ժան Օղասապեան 100 տոլար

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Շուգանաւորութեամբ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ (Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)

### ՀՈԳԵԻՈՐ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Այսօր՝ Ուրբաթ, 21 Նոյեմբեր 2003, երեկոյան ժամը 6:00ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ:

### Դասախօս՝ ԳԵՐՊ. Տ. ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ԶԻՖԹԵԱՆ

Նիւթ՝ «ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ» Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալները: ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ Ս. ՆՅԱՆ ՍԱՐԴ ԵԿԵՂԵՑԻՈՅ

### ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Սիրով կը հրաւիրուիք պաշտօնական հոգեհանգիստին, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 23 Նոյեմբեր 2003ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ (Նոր Ատանա, Պուրճ Համուտ), ի յիշատակ Ազգային Բարերար ՄԻՇԸԱՆ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆԻ եւ իր ընտանիքի անդամներուն՝ ԶԱՊԷԼԻ, ԼԵՅԼԱԿԻ ու ՀԱՌԷՐՏԻ եւ նաեւ հաստատութեան նախկին տնօրէն ՆՈՒՊԱՐ ու ԱՆԱՇԻՏ ԳԱԻԹԵԱՆՆԵՐՈՒ:

### ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ

(Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի) Այս առթիւ, եկեղեցական արարողութիւններն ենք, բոլոր այն կազմակերպութիւններու եւ դպրոցներու ներկայացուցիչները, որոնք կը գործակցին մեր հաստատութեան հետ, հրաւիրուած են Գարակեօզեան հաստատութեան վարչութեան եւ պաշտօնութեան հետ տեսակցութեան մը՝ Գարակեօզեան կեղրոնի մէջ, Պուրճ Համուտ:

Վստահ ենք, որ ձեր ներկայութեամբ ու գործակցութեամբ պիտի քաջալերու մեզ, շարունակելու եւ բարելաւելու մեր զանազան գործունէութիւնները:

### ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ


ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՄՃԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՄ  
«ՀՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ  
ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ»  
Ընճական Ակնարկ  
Կը դասախօսեն  
(Անգլերէն Լեզուով)  
ՓՐՈՑ. ԵՒՆԷՆ ՍԱՏԵՐ (AUB)  
ԴՈԿՏ. ՖԻԼԻՓ ԿԻՅՕՍ (NEST)  
Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 27 Նոյեմբեր 2003, երեկոյան ժամը 7:00ին, Հայկազեան Համալսարանի հանդիսարանին մէջ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ  
Ազգային առաջնորդարանը կարիքը ունի Ազգային Տուրքի գանձիչներու: Եւտաքրորուողներն կը խնդրուի դիմել Ազգային առաջնորդարան, Պուրճ Համուտ, Ազգային Տուրքի գրասենեակ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ  
2004  
Հ.Յ.Գ. Լ.Ե.Ս.ի 2004ի ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՅԸ  
ՍՍԿ՝ 10.000 Լ..Ո.

### ՍՏԱՅԱՆՔ

● «ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒԹԻՒՆ ԸՍՏ ՀԱՅ ԶԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ»  
ԳԱՐԵԳՐՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
(Կրօնական, աստուածաբանական եւ հայագիտական)  
● «ԵՐԿԵՐ»  
(Հայերէն շարք, Ա. հատոր)  
Խմբագիր՝ ՎԱԶԳԷՆ ՂՈՒԿԱՍԵԱՆ



Եթէ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտ ես. մասնակցէ՛  
«Պատիկ - Վպտիկ»ի հայերէն ուղղադարձութեան մրցումին:  
- Մրցումին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտներ:  
- Արձանագրութիւնները տեղի կ'ունենան 10 Նոյեմբերին 2 Դեկտեմբեր. հեռաձայնելով 01 - 260115 թիփն, երկուշաբթիէն Ուրբաթ օրերը, կէսօրէ ետք ժամը 3:00էն 5:00:  
- Մրցումը տեղի կ'ունենայ Կիրակի, 7 Դեկտեմբերին, Մեսրոպեան վարժարանի սրահին մէջ, կէսօրէ ետք, ժամը 3:00էն 4:00 4րդ դասարան, 4:00էն 5:00 5րդ դասարան, 5:00էն 6:00 վեցերորդ դասարան:  
- Իւրաքանչիւր մակարդակի շահողը պիտի ստանայ արժէքաւոր նուէր մը. իսկ բոլոր մասնակցողները պիտի ստանան յիշատակի նուէրներ:  
- Յանձնախմբի տեղեկութիւններու համար հետեւիլ «Ազգային»:


ԲԱՍԱԶԳԱՅԻՆԻ ԳՐԱՍԱԼՈՒՆԻՑ. «Ճաղկոյեան» կեղրոն. հեռ.՝ 01-241263/4







# 7րդ Արտուեստ



## ԱՄԵՐԻԿԱԿԱՅ ՓԱՍՏԱԲԱՆ ՉԱՐԼՁ ԿԵՐԻԻ ՄԱՍԻՆ ՎԱԻԵՐԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ԺԱՊԱԿԵՆ



© Ilka Hartmann 2003

Ամերիկացիները ուսանողներ՝ Հրակ Ետալեան եւ Արա Սուճեանը կը պատրաստեն վաւերագրական ժապաւէն մը՝ նուիրուած ամերիկացի սահմանափակ փաստարան եւ քաղաքական գործիչ Չարլզ Կէրիի:

Վաւերագրական ժապաւէնը, որուն պատրաստութեան աշխատանքները սկսած են 2003 թիւն-

ւարին, կը ծրագրուի հանրութեան ներկայացնել այս տարուան աւարտին: Ժապաւէնին պատրաստութեան գաղափարը ծնունդ առած է, երբ Հրակ Ետալեան, որ Քալիֆորնիոյ «Պրոքրի» համալսարանին մէջ կը մասնագիտանայ պատմութեան մէջ, ծրագրած է իր ուսումնասիրութեան նւթը ընտրել Չարլզ Կէրիին:

որուն փաստարանական բեղուն ասպարէզը ընթացած է ամերիկեան բազմաթիւ ներքին բախումներուն զուգահեռ: Աշխատանքին ընթացքին աստիճանաբար զարգացած է վաւերագրական ժապաւէն մը պատրաստելու միտքը, ինչպէս նաեւ գործակցութիւնը Հրակ Ետալեանի եւ Արա Սուճեանի միջեւ, որ նախապէս գրած, արտադրած եւ բեմադրած է Ամերիկայի Հայ Դատի Մարմինի համար կարճ ժապաւէններ եւ կ'աշխատակցի չորս վուտեան սփիւտիոներու իբրեւ արուեստի բաժանմունքի պատասխանատու:

Ան պիտի ներկայացնէ փաստարանին կենսագրութիւնը եւ, Հրակ Ետալեանի իսկ բառերով, պիտի ըլլայ «ժապաւէնի վրայ արձանագրուած կենսագրութիւն մը, որ պիտի սկսի Չարլզ Կէրիի մանկութեամբ եւ աւարտի անոր վերջին խօսքերով»:

Իրենց այս նպատակաւոր իրականացներու համար երկու բեմադրիչները անցնող ամիսներուն ձեռնարկած են լայնածաւալ հարցազրոյցներու, որոնց ցանցը ընդգրկած է Չարլզ

Կէրիին լաւապէս ճանչցած եւ կամ անոր հետ առնչուած անձերը:

Անոնց շարքին են Չարլզ Կէրիի եղբայրները, ամերիկահայ լրագրող Ռոքսան Մաքադեան (Պէզզեան), փաստաբաններ, քաղաքական գործիչներ, մարդիկ, որոնց քաղաքական եւ ընկերային բնոյթի դատերը պաշտպանած է Չարլզ Կէրի, ինչպէս նաեւ՝ անոր մասին գրած հեղինակներ եւ պատմաբաններ:

Հարցազրոյցներու կողքին, բեմադրիչները կատարած են ուսումնասիրական լայն աշխատանք՝ կարենալ ժապաւէնին մէջ պարփակելու համար Չարլզ Կէրիի կեանքին առնչուող կարեւոր մանրամասնութիւններ: Անոնք պրպտումներ կատարած են նաեւ Չարլզ Կէրիի օրինական թղթածրարներուն մէջ, որոնք պահուած են «Պրոքրի» համալսարանին մէջ:


Ամերիկահայ փաստաբանին կեանքին կարեւոր հանգրուաններուն կողքին, ժապաւէնը պիտի ներառէ վաղու փաստաբանութիւններ, որոնք շատ ծանօթ չեն լայն հանրութեան: «Օրինակի համար

բիչեր գիտեն, որ Չարլզ Կէրի որոշած էր 1948-1949 տարիներուն թեկնածու ներկայանալ Քոնկրէսի: Իր թղթածրարներու ուսումնասիրութիւններուն ընդմէջէն տեղեկացանք իր ընտրաընտրութեան մասին», բեմադրիչներուն հետ «Ազդակ»-ի ունեցած համացանցային հաղորդակցութեան ընթացքին կը նշէ Հրակ Ետալեան:

Չարլզ Կէրիի մասին վաւերագրական առաջին ժապաւէնը պատրաստուած է Ռոքսան Մաքադեան (Պէզզեան) ի կողմէ, 1992ին: «Չարլզ Կէրի-սթրիթֆայնը ին բորթրուժ» խորագրեալ այս ժապաւէնը, որ նկարահանուած է նախքան փաստաբանին մահը (1992), կը կեդրոնանայ փաստաբանին ասպարէզը յատկանշող դատական վեց գործերու վրայ, որոնք դատարան հասցուցած են 1960-ական տարիներու ամերիկեան քաղաքական եւ ընկերային խոհանոցին կարեւորագոյն հարցերը: Ժապաւէնին մէջ Չարլզ Կէրի կը խօսի իր հայկականութեան եւ քաղաքական, ընկերային թէ՛ օրինական սկզբունքներուն մասին:

## Նոր ժապաւէններ

Սպասելով յառաջիկայ շաբաթներուն լիբանանեան շարժապատկերի սրահները որակով հարստացնելու յոյս ներշնչող ժապաւէններու գալուստին, այս շաբաթ եւս ցուցադրուած ժապաւէններուն ցանկը կը մնայ համեստ: Բայց եւ այնպէս, պէտք է չմոռնալ սակաւաթիւ լաւ ժապաւէններու առկայութիւնը, որոնց խումբին միացալու կու գայ «Ֆայնտիկ Նիմօ» կենդանի գծանկարը:



### «Ֆայնտիկ Նիմօ»

**Բեմադրիչ՝ Էնրիկ Սթեֆան Է Լի Ունթրիչ**

Տարուան լաւագոյն կենդանի գծանկարներէն մէկը նկատուած այս ժապաւէնը իր հրապարակուած կարճ ժամանակ տեք արդէն իսկ անցադասականացած կենդանի գծանկարներուն շարքին: Հայր-գաւակ ջրային արկածախնդրութիւն մը եղող այս ժապաւէնը մանուկներուն համար շատ մատչելի ձեւով կը կեդրոնանայ ընտանեկան յարաբերութիւններու, քաջութեան եւ որոշումներ տալու կարողութեան վրայ:


Նիմօ հոսպիտ ձկնիկ մըն է, որ սուզորդի մը կողմէ կը բռնուի եւ իբրեւ գաղղ կը տարուի գետեղուելու առամնաբոյժի մը ձկնարանին մէջ: Անոր շատ կապուած հայրը անմիջապէս կը ձեռնարկէ գայլն փնտրելու աշխատանքին: Անոր կը միանայ ցրուած, սպիւն քարեմիտ ձուկ մը, որուն հետ հայր ձուկը կը սկսի իր արկածախնդրական ուղեւորութեան՝ կարելու համար ովկիանոսին մէկ ծայրէն միւսը: Միւս կողմէ, Նիմօ իր կարգին կը մշակէ ազատութիւնը վերագտնելու ծրագիրներ՝ օժանդակութեամբ ձկնարանի իր նոր ընկերներուն:

Ջուարբախտութեամբ եւ դաստիարակչական բաժիններով հարուստ այս ժապաւէնին մէջ գլխաւոր կերպարներուն ձայները կը պատկանին Էլյարթ Պրոքսի, Էլլէն Տը ձեներթսի, Ալեքսանտր Կուլտի, Ուիլիլմ Տեֆոյի եւ ուրիշներու:

### «Հէյ աֆ սթըյ»

**Բեմադրիչ՝ Քրիս Ռոք**

Ամերիկեան քաղաքական կեանքին գաւեշտական կողմերը մատնացոյց ընող կատակերգական այս ժապաւէնին մէջ գլխաւոր կերպարով



հանդէս եկած է բեմադրիչը: Ան ստանձնած է անակնկալօրէն ինքզինք նախագահական թեկնածուի դիրքին վրայ գտնող սովորական քաղաքացիի մը դերը: Այսպիսի բեմադրութեան ներկայացնող բազմաթիւ այլ ժապաւէններու մեծ, Մէյք Կիլլիլմ դժուար պայմաններու մէջ ապրող սովորական անձ մըն է, որուն շուրջ դէպքերու նոր ընթացքին լոյսին տակ, կը համախմբուի պատեհապաշտ բարեկամներու խումբ մը, որուն մաս կը կազմեն նախկին սիրուելի եւ անհարակ մեծ եղբայրը: Ժապաւէնը կը ձաղկէ ամերիկեան ընկերային եւ քաղաքական շրջանակներու բարբերը:

Ջուարբախտութեամբ հարուստ այս ժապաւէնին մէջ Քրիս Ռոքի կողքին դեր ստանձնած են նաեւ Տիլլան Պէյքըր, Պրոքի Մէք եւ ուրիշներ:

## ԺԱՊԱԿԵՆՆԵՐ - ԿԱՐԾԻՔ

- «ՎԵՏ ԱՅ ՍՈՒՅՅ» (Ամփր/Տիւն, Սեթ Էլի, Սոտեթ, Ֆրիուէ, Զաւիթ, Սթալիւ, Կալաքսի)
- «ՖԱՅՆՏԻԿ ՆԻՄՕ» (Փլանք/Ապրած, Զոնք, Զոնք, Զոնք)
- «ՄԻՍԹԻԵ ՌԻՎԵՐ» (Ամփր/Տիւն, Եսփաս, Սոտեթ)
- «ՊԱՅԵՐ ՊՈՅՅ» (Ամփր/Տիւն, Սեթ Էլի, Սոտեթ, Ֆրիուէ, Զաւիթ, Սթալիւ, Լա Սալիմաս, Կալաքսի)



- «ՎԵՆ ՌԻՎԵՐ» (Փլանք/Ապրած, Զոնք, Զոնք)
- «ՌԵՏ ՍԱՅՐԵՆ» (Փլանք/Զոնք, Ապրած, Զոնք)
- «ԱՅՏԵՆԻՍԻՍ» (Ամփր/Տիւն, Եսփաս, Սեթ Էլի, Ֆրիուէ, Սթալիւ 2001, Լա Սալիմաս, Կալաքսի)
- «ՏԵՐԹԻ ՓՐԻՍԻ ԹԻԿԻՍ» (Փլանք/Զոնք, Ապրած, Ապրած, Զոնք)
- «ՖՐԻԵԻ ՖՐԱՅԵՅ» (Փլանք/Զոնք, Ապրած, Զոնք)
- «ՏԵ ՎՈՒՏ ՎԵՐԼ» (Փլանք/Զոնք, Զոնք)
- «ՏԵ ՏԻՎՈՐ» (Ամփր/Սոֆիլ, Ամպաստ)
- «ՏԵ ՌԵՍԵ» (Ամփր/Սոտեթ)
- «ԱՆՏԵՐ ՌԻՎԵՐ» (Ամփր, Եսփաս, Սեթ Էլի, Սոտեթ, Սթալիւ 2001, Կալաքսի)
- «ՖԱՆՏԱՆ ԱՍ ԹԻԻԼԻՓ» (Փլանք/Զոնք, Զոնք, Ապրած, Զոնք)
- «ՏԵ ՍԵՐ ՎՈՒՆ» (Ամփր/Տիւն, Եսփաս, Սոտեթ, Կալաքսի)
- «ՏԵ ՍՈՒՆ ՌԻԻԼ ԱՎ» (Ամփր, Սոֆիլ)
- «Ս. Ռ. Ա. Թ.» (Ամփր/Ֆրիուէ, Սթալիւ 2001)
- «ԻԹԵԼԻԸ ՃԱՊ» (Ամփր/Սոտեթ, Ֆրիուէ, Լա Սալիմաս)
- «ՌԻՍԵ Ե ՎԵՐԼ ՌԻՆԵՅ» (Ամփր/Սոտեթ, Ֆրիուէ, Սթալիւ 2001)
- «ՍՈՒՆՍԻԿ ՓՈՒԼ» (Փլանք/Զոնք, Ապրած, Զոնք)
- «ՍԻՆՊԱՍ» (Ամփր/Սեթ Էլի, Ֆրիուէ, Զաւիթ, Կալաքսի)
- «ՌԻՆՍ ԸՓԱՆ Ե ԹԱՅ ԻՆ ՄԵՍԻԵՕ» (Փլանք/Զոնք, Զաւիթ, Զոնք)
- «ՊԱՅԵՐ ՍՈՒՆԸՐԱ» (Փլանք, Զոնք)
- «ՊԵՏ ՊՈՅՅ 2» (Ամփր, Ամպաստ, Կալաքսի)
- «ԹՐԱ ԱՅ ՏԵ ՍԱՆ» (Ամփր/Ամպաստ)

●●●●● Գերազանց ●●●●● Շատ լաւ ●●●●● Լաւ ●●●●● Միջակ ●●●●● Ժանցանք ●●●●● Զեղարար ●●●●● Զեղարար

ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ՍՐԱԿԱՆՈՒՄԻ ԶԵՆՈՒՄՆԵՐԻ ԹԻԻԵՐԸ  
 Եսփաս. 09/212516 - Սոտեթ. 01/616707 - Ֆիւ. 01/792123 -  
 Սոֆիլ. 01/328806 - Ֆրիուէ. 01/738439 - Ամպաստ. 09/226010  
 Ֆրիուէ. 01/485590 - Ապրած. 01/292192 - Ֆալիւ. 09/912503 - Զոնք. 09/221363  
 Սթալիւ. 08/813901 - Սեթ Էլի. 04/406706 - Երիւի. 06/442471:

## ԹԱԼԻՆ ՔԻՊԱՐԵԱՆ ԵՒ ՊԵՏՐՈՍ ԹԵՄԻՉԵԱՆ «ՏՈՔԻՏԵՅՉ»Ի ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐ

Հինգշաբթի, 13 Նոյեմբերին, աւարտեցաւ Պէյքըրի Միջազգային Վաւերագրական Ժապաւէններու փառատօնը՝ «Տոքիտէյ»-ը, «Մետիս» թատերաբանին մէջ տեղի ունեցած պաղեստինեան «Փորտ թրանզիթ» ժապաւէնին (բեմադրիչ՝ Հանի Ապու Ասատ) ցուցադրութեամբ, որուն յաջորդեց փառատօնին մասնակցած ուսանողական վաւերագրական ժապաւէններու մրցանակաբաշխութիւնը: Լիբանանեան եւ միջազգային փառատօններու ներկայացուցիչներէն կազմուած դատական կազմին մրցանակներուն արժանացան շարժապատկերի մարզին լիբանանցի թէ՛ օտար տասնեակ մը ուսանողներ:

Լաւագոյն միջազգային վաւերագրական ժապաւէնի մրցանակին արժանացաւ սլովաքի Ջուր Պրոքսիի «Ուայֆ աութ» ժապաւէնը, որ լուսարձակի տակ կ'առնուի իրենց ընթացիկ գործերը կատարող ոստիկաններու խումբի մը կողմէ ստացուած տեղեկութիւններուն նկատմամբ անվտանգութեան միջոցառումները:

Լաւագոյն պրպտութի եւ նիւթի մրցանակը բաժնեկցեցան լիբանանեան երկու ժապաւէններ՝ «Մեթիս 66» (բեմադրիչ՝ Մաքս Արապ) եւ «Պոքրաբացա թալիսի» (բեմադրիչ՝ Մուսա Հասունէ) ժապաւէնները: Առաջինը

կը բացայայտէ լիբանանեան տուններուն մէջ աշխատող օտար սպասուհիներուն թղթածրարին մասին տեղեկութիւններ, իսկ երկրորդը կ'արձարծէ լիբանանեան ընտանիքներուն կողմէ աշխատանքային մարզերու մէջ օգտագործուող մանուկներու հարցը: Լաւագոյն թեքնիկ տիրացաւ դարձեալ սլովաքեան «Քիլիլիլ Ֆայրիք» (բեմադրիչ՝ Միլան Պալուկ) ժապաւէնը, իսկ դատական կազմի յատուկ մրցանակին արժանացաւ լիբանանեան «Քիլիլիլ մուսիքիյա» (բեմադրիչ՝ Պետրոս Թեմեզեան) ժապաւէնը, որ կը կեդրոնանայ Լիբանանի պետական նուագախումբի կազմութեան եւ աշխատանքներուն վրայ: Ժապաւէնը կը կեդրոնանայ աշխատանքային յարաբերութիւններու եւ փորձերուն ընթացքին յաջողութիւնները: Առաջինը

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ԸԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԸԱՅՐ ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՍԱՆՈՒԱՆ 100ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ (1820 - 1901) Բանախօս՝

ՀԱՅՐ ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՕՂԱՆԵԱՆ (Մխիթարեան միաբանութեան ընդհանուր քարտուղար)

●Գեղարուեստական յայտագիր

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 21 Նոյեմբեր 2003, երկուշաբթի 8:30ին, «Յ. Տեր Մելքոնեան» հանդիսարանին մէջ:

ԸՐԱԿԵՐ

## Պատրաստեց՝ Պ. ՓԱՆՈՍԵԱՆ

## ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»-ի ծանուցումներու գրասենեակը:







# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



# ԱՇԽԱՐՀ



## ՇԱՆՐԱՐԱՐՁՈՒԹՅՈՒՆ

### ՉԱԽՈՅԵԱՆ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՇՆՈՐՀԵՅ ՊՐՈՆՋԵ ՄԵՏԱԼ ՄԸ



Լիու ՉուՆԳ ՉոՆԳ

Քանատայի Վանքուվեր քաղաքին մեջ տեղի ունեցող ծանրարարձույթեան աշխարհի ախոյեանութեան ճրգ օր- ան մրցումներուն Հայաստանը ներկայացնող Տիգրան Քամարեան եւ Գէորգ Ալեքսանեան չտուն իրենց մէջ սպասուածը եւ գրաւեցին 85 քմ կշիռային դասակարգի վերջնական դասաւորման 16րդ եւ 17րդ ոչ նախան- ձեւի դիրքերը:

Միեւնոյն կշիռային դասակարգի մրցումներուն ալ չայ մը՝ Սերգօ Չախոյեան, այս անգամ Աւստրալիան



Վալերիու Զալանսէա

ներկայացնող, արաչէի մրցումներուն բարձրացուց 172,5 քմ, իսկ էփուլէ ժրթէի ընթացքին՝ 205 քմ. եւ գրաւեց ընդհա- նուր դասաւորման 3րդ դիրքը՝ ուսմանցի Վալերիու Քալանսէայի (167,5 քմ. + 215 քմ.) եւ չինացի Եուան ԱիճուՆի (170 քմ. + 212,5 քմ.) ետին:

Նշենք, որ արաչէի մրցումներուն Չախոյեանի ար- դիւնքը լաւագոյնն էր, իսկ էփուլէ ժրթէի ճակատումնե- րուն ան գրաւեց 3րդ դիրքը:

Աղջկանց մրցումներուն, 69 քմ. կշիռային դաս- կարգի ոսկի մետալակիր Հանգիսացաւ չինացի Լիու ՉուՆ ԳոՆԳ, որ կոտրեց նախապէս իր իսկ Հաստատած արաչէի եւ էփուլէ ժրթէի մրցանիշները:

- Ստորեւ դասաւորումը՝
- 1.- Լիու ՉուՆ ԳոՆԳ (Չինաստան) (120 քմ. + 150 քմ.)
  - 2.- Էսթեր Քրուցլէր (Հունգարիա) (117,5 քմ. + 145 քմ.)
  - 3.- Վալերիու Փոփովա (Ռուսիա) (117,5 քմ. + 140 քմ.)

## ՅՈՒԹՊՈԼ

### ԹՈՒՐՔԻՈՅ ՍԷՋ ՏԵՂԻ ՌԻՆԵՆԱԼԻՔ ԽԱՂԵՐ՝ ՅԵՏԱԶԳՈՒԱԾ

Եու. Է. Էֆ. Ա. յետաձգեց եւրոպական ակումբ- ներու ախոյեանութեան երկու մրցումներ, որոնք տեղի պիտի ունենային Թուրքիոյ մէջ յա- ռաչիկայ չինգզաթի:

Արդարեւ, «Էմփիլընկ Լիկ»ի Գ. խմբակի մրցումներուն ծիրէն ներս Կալաթասարայ-Եու- վենթուս մրցումը, եւ Եու. Է. Էֆ. Ա.ի բաժակի ծիրէն ներս Մաքապի չափա - վալենսիա մրցումը (որ տեղի պիտի ունենար Իվմիրի մէջ) յետաձգուեցան երէկ, Պոլսոյ մէջ տեղի ունեցած ահաբեկչական գործողութիւններուն պատճա- ռով:

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՅՈՒԹՊՈԼ

### ՉԱԲԱԹԱԿԵՐՋԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

Տրուած ըլլալով, որ «Ազգակ» լոյս պիտի չտեսնէ Շարաթ, 22 Նոյեմբերին, սովո- ռական է օր մը առաջ կը ներկայացնենք Եւրոպայի ազգային ախոյեանութիւններու ժամանակացոյցը:

Ստորեւ՝ խաղերու յայտագիրները (բոլոր ժամերը՝ Պէյրուսի ժամանակացոյցով):

ԱՆՂԼԻԱ	ԺԱՄ
<b>ՇԱՐԱԹ</b>	
Մանչեսթըր Եունայթըտ - Պլեյքարտ	14:30ին
Միտլըպորո - Լիվըրպոլ	17:00ին
Նիքթալ - Մանչեսթըր Սիթի	17:00ին
Սաութհեմթըրն - Չելսի	17:00ին
Պիրմինկիէմ Սիթի - Արսենալ	17:00ին
Էվըրթըն - Ուոլվըրհեմթըրն	17:00ին
Լիօ Եունայթըտ - Պոլսըն	17:00ին
Լայպըր Սիթի - Չարլթըն	17:00ին
<b>ԿԻՐԱԿԻ</b>	
Թոթենհամ - Ասթոն Վիլա	18:05ին
<b>ԵՐԿՈՒՇԱՐԹԻ</b>	
Ֆուլհէմ - Փորթսմութ	22:00ին
<b>ԻՏԱԼԻԱ</b>	
<b>ՇԱՐԱԹ</b>	
Մոտենա - Եուվենթուս	19:00ին
Ինթեր Միլան - Ռեճինա	21:30ին
<b>ԿԻՐԱԿԻ</b>	
Անքոնա - Պրեշիա	16:00ին
Պոլոնիա - Ռոմա	16:00ին
Էմպոլի - Փարմա	16:00ին
Լացիօ - Փերուճիա	16:00ին
Լեչէ - Սամպորիա	16:00ին
Ուտինէպէ - Սիենա	16:00ին
Քիեւօ - Ա. Սէ. Միլան	21:30ին
<b>ՍՊԱՆԻԱ</b>	
<b>ԿԻՐԱԿԻ</b> (բոլոր խաղերը՝ ժամը 18:00ին)	
Պեթիս - Տեփորթիօ Լա Քորուսա	
Սելթա Վիլո - Աթլետիքօ Պիլաո	
Էսպանիոլ - Սելիլա	
Ռասիլն Սանթանտեր - Ռէալ Սարալոսա	
Ռէալ Մատրիտ - Ալպասթ	
Ռէալ Սոսիետատ - Մալորքա	
Վալադոլիտ - Աթլետիքօ Մատրիտ	
Վիարէալ - Պարսելոնա	
Ռէալ Մուսիս - Վալենսիա	
Մալախ - Օսասունա	
<b>ԳԵՐՄԱՆԻԱ</b>	
<b>ՇԱՐԱԹ</b> (բոլոր խաղերը՝ ժամը 16:30ին)	
Վոլֆսպուրկ - Պորուսիա Մէօնշտընկլատպախ	
Շթուրպարթ - Հանովեր 96	
Վերտըր Պրեմըն - Պոխում	
Քէօլն - Համպուրկ	
1860 Միւնիխ - Պայերն Միւնիխ	
Պորուսիա Տորթուստ - Պայեր Լեւերքուզըն	
Շալքէ 04 - Հանպա Ռոսթր	
<b>ԿԻՐԱԿԻ</b> (պոյգ խաղերը՝ 18:30ին)	
Քայլերըստըրն - Հերթա Պերլին	
Ֆրայպուրկ - Այսթրախթ Ֆրանքֆորթ	
<b>ՖՐԱՆՍԱ</b>	
<b>ՇԱՐԱԹ</b>	
Մոնպօ - Լանս	18:15ին
Կենկան - Սոչօ	21:00ին
Լիլ - Մարսէլ	21:00ին
Լիոն - Սթրասպուրկ	21:00ին
Մէթց - Օքսէռ	21:00ին
Պորտօ - Ռէնն	21:00ին
Մոնպելիէ - Ամքսիօ	21:00ին
Պարսիա - Նանթ	21:00ին
Թուլուզ - Լը Մանս	21:00ին
<b>ԿԻՐԱԿԻ</b>	
Փարիզ Սէն Ժերմէն - Նիս	21:45ին

**ՅՈՐՄԻԼԱ 1**

### ՈՒԻԼԻԸՄՍ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԱԾ Է ՇՈՒՄԱԽԸՐՈՎ

Մինչ Խուան Փալյօ Մոնթոյա կը հաստա- տէր, թէ պիտի լքէ Մըք- լարէնը 2005ին, Ֆրանք Ռիլիըմս խոստովանե- ցաւ, թէ իր նպատակն է ապահովել վեց անգամ աշխարհի ախոյեանի հանդիսացած Մայքըլ Շումպարի ստորա- գրութիւնը:

Մոնթոյա պարմա- նաւորէն 2004ի եղա- նակէն առաջ իսկ յայ- տարարեց, թէ 2005ի եղանակին պիտի հե- նանայ Մըքլարէնի խումբէն, իսկ Ռիլիըմս անապարանքի մէջ չի թուիր ըլլալ պայման- յաւորեալ մրցանակաւոր աշխատանքին մէջ:

Պատասխանատու մըրսա «Մեր ժամանա- կը պիտի առնենք. յա- ռաչիկայ եղանակին պիտի ունենանք Ռայֆ Շումպարի ունենանք Ռայֆ Շումպարը եւ Մայքոյա պոյգը, եւ 2005ին մեզի միանայ ու պոյգ մեծ

թիւով վարորդներ պի- տի ըլլան»:

Թէեւ կ'ակնկալուի, որ ձենարն Պարթն կամ Մարք Ռիլիըմս ըլլալ Մոնթոյայի փոխարինողը, սակայն Ֆրանք Ռիլիըմս իր աչքերը յա- ռաչ է դէպի Շումպար:

«Եկած եմ այն եզրա- կացութեան, որ Շումա- խըր բոլոր ժամանակ- ներու յաւազոյն վա- ռորդն է եւ մտիկ ապա- զային կ'ուզեմ տեսնել Շումպարը իր աչքերը յա- սի վարորդ: Այս մէկը երազ է, այլ՝ նպատակ»:

## ԷՆ. ՊԻ. ԷՅ.

### ԻՆՏԻԱՆԱ, ՅԻՈՒՍԹԸՆ ԵՒ ԼԷՅՔԸՐԶ՝ ՅԱՂԹԱԿԱՆ



Վինս Զարթըրի կազմը տեղի տուաւ Ֆիլատելֆիոյ դէմ...

Էն. Պի. էյ. Էրէկուան մրցումներուն Հիուսթըն արձանագրեց իր ճրգ, իսկ Ինտիանա եւ Լէյքըրզ իրենց 9րդ յաղթանակները: Հիուսթընի գոհն էր Կոլտըն Սթէյվս, մինչ Ինտիանա եւ Լէյքըրզ յաջորդաբար տապալեցին Լոս Անճելըս Բիլիքըրը եւ Նիւ Եորքը:

Ստորեւ երէկուան մրցումները եւ դասաւորումը:

Ֆիլատելֆիա - Թորոնթօ	81-75
Ուաշինկթօն - Քիլվինստ	106-95
Նիւ Օրլինս - Պոսթըն	81-73
Լոս Անճելըս Լէյքըրզ - Նիւ Եորք Ինտիանա - Լոս Անճելըս Բիլիքըր	104-83
Տիքսոն - Մեմֆիս	91-78
Տենսի - Միլուոքի	99-92
Սաքրամենթօ - Եուրօ	94-86
Հիուսթըն - Կոլտըն Սթէյթ	118-110
Փորթլենտ - Մայեմի	85-83
Փորթլենտ - Մայեմի	94-93

## ԱՐԵՎԵԼԵԱՆ ԶՐՁԱՆ ԱՏԼԱՆՏԵԱՆ ԾՐՁԱՆ

	ՅԱԼԹ.	ՊԱՐՏ.
Ֆիլատելֆիա Սիքսըրկ	6	6
Պոսթըն Սելթիքս	5	6
Ուաշինկթօն Ուիլքըրտօ	5	6
Նիւ Ճըրպի Նեթ	5	6
Նիւ Եորք Նիքս	3	8
Մայեմի Հիթ	3	9
Օրլանտօ Մէճիք	1	10

**ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԳՕՏԻ**

Ինտիանա Փէյլըրզ	9	2
Նիւ Օրլինս	9	3
Տիքսոնիք Փարթնս	8	4
Միլուոքի Պաքս	5	6
Թորոնթօ Ռեփլըրկ	5	6
Աթլանթա Հոքս	4	8
Շիքաքօ Պուլզ	4	8
Քիլվինստ Քաւալիքս	4	8

● **ԱՐԵՎԵԼԵԱՆ ԾՐՁԱՆ ՄԻՋԱՐԵՎԵԼԵԱՆ ԳՕՏԻ**

Հիուսթըն Ռոքեթ	8	3
Տալա Մալթրիքս	7	4
Սան Անթոնիօ Սփըրզ	7	5
Տենսի Նակթըց	6	5
Միլուոքի Վուլվզ	6	5
Եուրօ ձէպ	6	6
Մեմֆիս Կրիպիլս	5	5

**ԽԱՂ ԱՂԱԿԱՆ ԳՕՏԻ**

Լոս Անճելըս Լէյքըրզ	9	3
Սիթըլ Սուփըրսոնիքս	6	3
Սաքրամենթօ Քիւկ	7	4
Փորթլենտ Թրէյլ Պլէյքըրզ	6	5
Լոս Անճելըս Բիլիքըր	4	4
Ֆէօնիքս Սանս	4	6
Կոլտըն Սթէյթ Ուորիքրզ	4	7

**DAY WATER**

Մասնավորապէս որոշում ստանալու համար զննման պարագային Բնակարան 10,000 Լ.Ո. Հասարակութիւններու համար յարուցիչ դրոշմները:

Կայսերա ինքն ճաշի՝ AFTLEM EST. Near Lebanon Electric Company Tel.: 01 - 446 325 / 570 1007

**DAY WATER**

Clean & Safe Water

Under Hygienic Condition

NATURAL - PURELY WATER - NO CHEMICALS

Free delivery

19 lit. @ 2000L.L.

Mr. Jim Manouk Keushkerian owner

**DAY WATER, Tel.: 03/435298**

Approved By Rain Water

